ნორა: კავალენგ է 30-40-ამჯა აუგ ბრიტანული, იყ ფრედისანდოუერამპ აქართხე ჩ ბრძლაკან ჰანალაურანდ, აუგ ნათე ასაქრონიტოლან: Մცნე ჭირდებენ აუგათხე, թე ჩნდნ է ბრიტანულ ბრძლის ასთხავე ზოგინებ ჰაյრენი თოւნებ ხა აღანდნანანალ აუგ ანდრანი ქილომ, სალაკან ნა გვან-კადავ მხე გორისტე. «ზნ ი- გორი ჟისტე, მწ იურგ ანდამ გორისტ», - მწარ რანდ, ირ ასაგ, აუგ ტე, ის თოւნ მათავ: ჩარეს, ბრიტანული

այստեղ գլուխվելով մասին հարեւած գյուղերում եւ մասնավորապես Կոստանդնուպոլիսում ամենատարբեր վարկածութեան են շրջանառվում, որոնց մի մասը ֆանտասիկ ժամանի ֆիլմերում նույնականացնելու համար է առաջարկվում: Այս բան պարզ է՝ որ մեզանից շատերը, չկարողանալու դիմանալ երկրում տիրող բարքերին հեռանում են, մեկը՝ հեռավոր ամբողջ աշխարհում գոյութ, մյուսը՝ արտերկիր են:

Նոր խմբաւելյակի բացում N4 նախակրթարանում

ՆԱԽԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 30-ին Կապանի թիվ 4 մանկապարտեզում բացվեց թվով յոթերորդ խմբաւենյակը: Նոր խմբաւենյակի բացումը հնարավորություն կտա մանկապարտեզ հաճախել եւս 25 երեխայի: Նախաձեռնության իրականացմանն աջակցել են Սյունիքի մարզպետ Սուլեն Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանը, «Դիմո գոլդ մայնինգ քամփին» ընկերությունը, «Վորլդ վիժն Յայաստան» կազմակերպության Կապանի տարածքային զարգացման ծրագիրը, զենքեւահայքարեգործ Անահիտ Զաքարյանը: Նախակրթարանի տնօրեն Լուսինե Զաքարյանը, ով արդեն երեք տարի է, ինչ դեկավարում է այդ հաստատությունը, շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ աջակցության համար. «Ծիշտ է, երեք տարին աշխատանքային գործնենության համար այնքան էլ մեծ չէ, սակայն այս ամբողջ ընթացքում փորձել են հնարավոր ամեն ինչ անել նախակր-



**Արդուր Աթայանը Լուսինէ
Զաքարյանին է հանձնում
բաղաքապետարանի նվերը:**

յան մանկապարտեզի հոգսերին եւ նոր ներդումներ կատարելու խոստում տվեցին՝ եւս մեկ խմբաքածին նորոգելու համար։ Կապանի քաղաքաբես Արտուր Աթայանը երեխաներին հանձնեց գրենական պիտույքներ, իսկ կրօջախին՝ ուղեգորգեր և իսկ երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին, N4 նախակրթարանի սաներին այցելեցին «Ֆինքա» վարկային կազմակերպության եւ «Վորլ վիճա Դայաստանի» կազմակերպության Կապանի տարածքային զարգացման ծրագրի աշխատակիցները, ովքեր եւս դատարկածեն չէին եկել։ Կազմակերպեց կավճանկարություն, աչքի ընկած փոքրիկները որ որպես խրախուսանք ստացան նվերներ։ Մեզ հետ գրույցով Լուսիններ Զարայանը հույս հայտնեց, որ զայլիք՝ հրեխանական տարրում արդեն անբողջ մանկապարտեզը նորոգ տեսք կունենա, քանի դրա կարիքը շատ է զգացվում, չև որ 1973 թվականից առ այսօր մանկապարտեզը չի վերանորոգվել։

ԱՂԱՎԵՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հրաժեշտ մանկապարբերին

ՆԱԽԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 31-ին բարձր ու ուրախ տրամադրություն էր թեւածում Քաջարանի համայնքային նանկապարտեզում։ Նախակրթարանի սամերլո ծնողների, հյուրերի, դաստիարակների դատին հանձնեցին անցած մի քանի տարվա ընթացքում ծեռք թրած գիտնիքներուն ու հանճես եկան հրաժեշտ հոլովական խոսքերով։ Դանդիսաւեսը մեծ ոգեւորությամբ ընդունեց փոքրիկ հերոսների բեմադրած թատերական ներկայացումը, եւ ծնողները, չքարցնելով իրենց բերկրանքը՝ ասացին. «Սենք զգիտեհնո, որ մեր երեխանենու օժնված

շնորհակալություն հայտնեցին
իրենց դասվարներին՝ իրենց ծնողա-
բար սիրելու, փայփայելու ու ծիչտ
դաստիարակելու համար:

Ղամայնքային մանկապարտեզ
զի պատության ներ եղել են դժվա-
րին տարիներ, բայց կարողացել են
հաղթահարել բոլոր փորձություննե-
րը եւ մինչեւ այսօր իր հարկի տակ
ընդունել ու ճանապարհել հազա-
րավոր մանաւների: Իր բեմնավոր
աշխատանքային գործունեության
տարիներին մանկապարտեզ միշտ
է ունեցել է հետաքրքիր առօրյա,
գեղեցիկ ավանդույթներ, եւ, որ ամե-
նակարեւորն է, վայելուն է բարի
հաճրավ: Անհերքելի է, որ այդ հա-
ջողությունները մանկապարտեզն
ունեցել է տօնքների, դաստիա-
րակների, աշխատավազմի շնորհիկ: Մանկապարտեզն ունեն նեղանակումն

Կապանը պատրաստվում է ընկրությունների

Սեպտեմբերի 9-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կանցկացվեն նաև մարզ-կենտրոն Կապաճում:

ԱՐՏՈՒՐԻ ՏԻՄ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԿԻՎԱՐ՝ Էջ 5

Արժե, անշուշտ, մի քանի նախադասությանը էլ անդրադառնալ նարզկենտրոնի ավագանու սպասվող ընտրությանը եւ, առհասարակ, կապանյան ավագանու մերօրյա վիճակին:

Որբան էլ տարօրինակ է՝ 2008-ին ձեւավորված ավագանին բաղկացած է 11 հոգուց՝ 15-ի փոխարեն: Ըստորությունների ժամանակ անցշտուրյունների չափը այնքան մեծ էր, որ չըստ տեղ բափուր մնաց: Բայց դա միայն անցշտուրյուններով պայմանավորված հանգանակը չէ: Տեղական ինքնակառապայտնան մարմինների ձեւավորումից ի վեր (1996թ.) աստիճանաբար՝ ընտրությունից ընտրություն, նվազել է հետաքրքրությունն ավագանու անդամ դաշնաւոր հարցում: Եթե 1996-ին 15 տեղից բաղկացած ավագանու համար հավակնում էր 75, ապա 2008-ին՝ 37 հոգի:

Ամբողջ հանրապետությունում դժվարությամբ կայացող կամ գրեթե չկայացող այդ ինստիտուտն այդպես էլ գործն չդարձավ մարզկենտրոնում: 2010թ. Կապանի ավագանու անդամների հետ կազմակերպած «Վլոր սեղանը» եւ Իրանցից յուրաքանչյուրի հետ մեր ժանրությունը ցույց տվեցին, որ մարզկենտրոնի ավագանին ունի (արանձին-առանձին Վերցրած) ինտելեկտուալ, փորձառու, իրենց բնօրրանը սիրող անդամներ: Բայց նրանց անդամությամբ ստեղծված կոլեգիալ մարմինը՝ ավագանին, այնային է, ինչպիսին մյուս համայնքներում է՝ սեփական դեմք՝ -դիմագիծ չունեցող, համայնքային խնդիրներին անհաղորդ կամ անձնական պատուհանից նայող, խիստ կառավարելի, կանխատեսելի ու անձնուհաս: Ավելին, Կապանի ավագանու անտարբերության ու անկարողության արդյունքում հնարավոր եղավ մարզկենտրոնի քաղաքաշինական դիմացի Վերջնական ադաւասդում: Անցած չորս տարում ավագանին հանդես չեկավ գոնե մեկ նախաձեռնությամբ, որ ուղղված լիներ համայնքային այս կամ այն հիմնախնդիրի լուծմանը...

Առաջիկա սեպտեմբերին
ընտրվող ավագանին ավելի ուժեղ
եւ գործունակ չի լինի, քանի որ իրա-
վական դաշտում, քաղաքացիական
ու կլանային հարաբերություններում
եական փոփոխություններ (դրական
իմաստով) չեն երեւում: Չնայած
դրան՝ Կապանում ավագանու ան-
դամ դաշնալու ձգուումը, որքանով
հաստատում են մեր ուսումնասի-
րությունները, շատ-շատերին ոտքի
կիսնի: Եվ քանի որ կուսակցություն-
ներն էլ (Ընտրական օրենսդրություն
կատարված փոփոխությունների
համաձայն) ավագանու անդամի
թեկնածու առաջադրելու իրավունքը
ունեն արդյուն, ուստիեւ շատ հավա-
նական է, որ առաջատար քաղաքա-
կան ուժերի տեղական կառույցներն
իրենց թեկնածուներն առաջադրեն
ավագանու անդամ ընտրվելու հա-
մար, ինչն իր հերթին կքաղաքակա-
նացնի գործընթացը:

ՆՈՐ ԱՐԵՎԱԿԱՆՔ

Զախողված եւ անլուրջ մի միջոցառում եւս

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ ԾՎՈՒՄ

Մայիսի 29-ին Ծավ գյուղում
տեղի ունեցավ հանրային լսում,
որը կազմակերպել էր «Օփուլենդ»
թրեյխնագ սոլյուշնս» ՍՊԸ-ը՝ Ծավի
գյուղապետարանի հետ հաճատեղ։
Քննարկվել է Բարձրադիրի (Մազ-
րա) ուսկու հանքավայրի հնարավոր
շահագործման նախագիծը։ Հան-
րային լսումը երկու բառով կարելի
է բնութագրել այսպես՝ ձախողված
եւ անլուրջ միջոցառում։ Որովհե-
տեւ, նախ, «Օփուլենդ» թրեյխնագ
սոլյուշնս» ընկերության կողմից հ
սկզբանե չի հայտնվել լսումների
ստույգ ժամանակը, ապա նաեւ ըն-
թացքում, ըստ ներկաների, նրանք
չեն կարողացել բավարար տեղե-
կություններ տրամադրել հանքա-
վայրի հնարավոր շահագործման
մասին, նրանց խնդրում չի եղել որեւէ
մեկը, ով կկարողանար հստակ պա-
տասխանել շատ տարրական հար-
ցերի՝ հանքավայրի հնարավոր շա-
հագործման հետ կապված։ Նշենք,
որ «Օփուլենդ» թրեյխնագ սոլյուշնս»
ՍՊԸ-ն մինչ այժմ Սյունիքում ոչ
հայտնի ընկերություն է, որի տնօ-
րենն է Ռ.Ակրտյանը, ով նույնպես
մինչեւ հիմա երբեւ հրապարա-
կանորեն որեւէ աշխրով հնադես չի
եկել։ Լսումներին մասնակցում էին
«Օփուլենդ» թրեյխնագ սոլյուշնս»
ընկերության ներկայացուցիչները,
բնապահպաններ, տարրեր հասա-
րակական կազմակերպություններ-
ի ներկայացուցիչներ, Կապանի
«Օրիուս» կենտրոնի աշխատակից-
ներ, Շիկահողի պետական արգե-
լուցի տնօրեն Ռուբեն Ակրտյանը,
լրագրողներ, ծավագիներ։ ԶԿ-ների
ներկայացուցիչները, ովքեր մաս-
նակցել էին հանրային լսումներին,
հայտնեցին, որ չեն կարող հստակ
դիրքորոշում արտահայտել, որով-
հետեւ «Օփուլենդ» թրեյխնագ սո-
լյուշնս» ընկերության կողմից չի

գության գնահատման (ԾՍՎԳ) մեջ Սազդաշրջի փոխարեն ուսումնասիրված էր Մեղրի գետը, այստեղ մանրակրկտորեն նկարագրված է Շիկահողի պետական արգելոցը, Սոսիների պուրակը, այստեղի բուսական, կենդանական աշխարհը, բայց հետաքա գործողությունների մասին ոչ մի խոր չկա, թե ինչ է կատարվելու հետազոտման աշխատանքների ժամանակ եւ հետո, եթե հանքավայրը շահագործվի: Հստ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ծրագրի՝ հանքավայրի տարածքից հեռացված բուսականությունը կտեղափոխվի հարեւան ծավ գյուղի տարածք, սակայն ծավում այդպիսի տարածք չկա: Դանքի շահագործման հետեւանը պահածած թափուկներն էլ կտեղափոխվեն ծավի տարածք, եւ ստեղծվելու է աղբավայր, որի համար նույնպես տեղ չկա: Որպես տեղացի կարող եմ ասել, որ տարիներ առաջ ես այդ տարածքում կատարվել են երկրաբանական աշխատանքներ, եւ դրանց արդյունքում պարզվել է, որ Բարձրադրությ ընդամենը 2 տոննա ուկու պաշար կա, եւ շատ հնարավոր է, որ հանքի շահագործումը շահավետ չի լինի»:

Ծավեցիների շրջանում հանքի շահագործման նախագծի վերաբերյալ երկու տեսակետ կա: Առաջինը՝ բոլոր նրանք, ովքեր չունեն աշխատանք, կողմ են հանքավայրի շահագործմանը, իսկ երկրորդ խումբը դեմք է շահագործմանը, քանի որ, ըստ վերջիններիս, այդ դեպքում գյուղի եկուոգիային հսկայական վճար կհասցվի, եւ իրենք ստիպված կինեն հեռանալ գյուղից: Մի կին էլ, ով աշխատում է գյուղի խանութում, ասաց. «Քանի որ մոտակա երեք տարում հանքավայրը չի շահագործվելու, թող գյուղացիները գնան, մասնակցեն երկրաբանական աշխատանքներին, փող վաստակեն, որ կարողանան իրենց տունը պա-

իել, իսկ երբ արդեն խոսք գնա շահագործման մասին, մենք դեմ դուրս կզանք դրան»: Սակայն այստեղ մի բան հաշվի չի առնվել, եթե ծավաքին այսօր ընտանիքը պահելու համար ստիլպած է մասնակցել հետախուզական աշխատանքներին, ապա երեք տարի անց էլ այդ նույն ընտանիքը պահելու համար համբուլ կաշաստի, եւ, բնականաբար, դեմ չի լինի Բարձրադիրի հանքի շահագործմանը: Ունանք էլ նոտածում են, որ այդ ամենն ընդամենը 15 տարի է տևելու, եւ այդ կարծ ժամանակահատվածում գյուղի էկոլոգիան զգալի վնասներ չի կրի: Ընդ որում՝ առաջին երեք տարում իրականացվելու են հետախուզական աշխատանքներ, իսկ մնացած տարիներին շահագործվելու է բաց հանքը, եթե, իհարկե, Ծավի գյուղապետարանն իր համաձայնությունը տա:

Ծավի գյուղապետ Արարատ Մարտիրոսյանն էլ մեզ հետ զրոյցում իր կարծիքը հայտնեց՝ «Ծանոթ չեմ «Օփուլենդ թրեյլինգ սույուշն» ընկերության սեփականատիրոջը, առայժմ գրուցել եմ միայն ներկայացուցիչների հետ: Ես քաջ գիտակցում եմ, որ Բարձրադիրի բաց հանքի շահագործումը կանդադառնա գյուղի էկոհամակարգի, բռասական եւ կենդանական համակարգի վրա, սակայն Ծավում գրիծագրկությունը մեծ է, աշխատատեղեր չկան, եւ բնակչութերը կողմ են հաճաքավայրի շահագործմանը, որով հնարավորություն կստանան որոշակի գումար վաստակել: Այժմ արդեն մեկ տասնյակից ավելի երիտասարդներ աշխատում են հաճաքավայրի տարածքում՝ որական 4000-5000 դրամ աշխատավառով, ինչը գրծագրկության պայմաններում բավականին գումար է հեռավոր գյուղի բնակչութերի համար, որպեսզի իրենց ընտանիքի ժամանելու հոգան»: Գյուղապետը նաեւ նշեց, որ չպետք է նորանալ, որ Բարձրադիրի ուկու

համբավայրի եւ հարակից տարածքներում կան այնպիսի պատմամշակութային հուշարձաններ՝ հինգ եկեղեցի, որից մեկը՝ Մագրայի եկեղեցին, կանգուն է մինչ այժմ, Կեմանցի եկեղեցին, Կապուտոյայի (Դափուլի) երեք եկեղեցին, նաև Ղափուլայի (Կապուլա) կամորթը, այդ գյուղի գերեզմանոցը եւ այլն: Ծավի գյուղապետը համարում է, որ հանքի շահագործունել հնարավորություն կտա գյուղի մի քանի ընտանիքի ժամանակավոր ապրուստ հայրայթել, բայց եւ հավանականությունը մեծ է, որ այդպես ավելի կարագանա գյուղի Վերացումը: Սակայն վերջերս թե՛ Ծավուն եւ թե՛ Կապանուն խոսակցություններ են շրջանառվում, որ շուտով, Բարձրադիրի ոսկոր հանքից բացի, կիսովի Մազրայի հարակից տարածքներում մոլիրդենի եւ պղնձի հանքավայրերի շահագործման մասին եւս, այնպես որ՝ գուցեւ ամենեւին էլ ինքնանպատակ չէր, որ 2010թ. կառուցվեց Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհը:

ԱՊԱԿՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Խմբագրության կողմից

Երկու կրակի արանքում հայտնակած գյուղապետ Արարատ Մարտիրոսյանին հասկանալ կարելի է: Մի բան, սակայն, հասկանալ հնարավոր չէ՝ Ծավի գյուղապետությանը հանքարդյունահանման նպատակով տարածք է հատկացնում (թեկուցել վարձակալությամբ) մի ընկերության, որի մասին որեւէ տեղեկություն չունի, որի հիմնադիրներին ու դեկավարներին չի ճանաչում:

Մի բան էլ գավեշտալի է, եթե ոչ ողբալի: Մի՞թե Սյունիիքում քաղաքացիական հասարակությունն այն աստիճան է բացակայում, որ մեր երկրամասը պաշտպանելու համար «Թօչկան» շարժման մասնակիցներն են մեզ կոչ հղում...

 Աամարգագետնային, չի կարող լինել, դա աբսոլուտ է:

8. Առաջարկվող տարբերակները գործնականութ չկան, առաջարկվում է երկու տարրերակ՝ տեղում հանքաքարը հարստացնելու և հանքաքարը տարածքին բավականին մոտ գտնվող Վարդանիշեն համայնքի մեջ ներառված Այգեծանում հարստացնելու տարրերակ-ները: Վերջինս նույնպես լիարժեք տարրերակ չէ, քանի որ հարստացման այդ ֆարիլկան նման ծավալներով աշխատանք կատարելու, պոչաճբար գոյացնելու և մնացած այլ թույլտվություններն ու լիցենզիաները չունի: Այսինքն, եթե Այգեծանոր ֆարիլկան չհարստացնի, ի՞նչ պիտի արվի այդ հանքաքարի հետ: Տրանսպորտային, աղմուկի, փոշու, պահպանվող այլ տարածքների («Արենիկ» ազգային պարկ) վրա ազթեցություններն այդ նոր տարրերակի դեպքում ընդհանրապես հաշվարկված չեն:

Վարդված չեն:

9. Ինչպէ՞ս է տեղափոխվելու եւ պահելու հանրավայրի պայթեցման համար նախատեսված 60 տոննա պայթուցիկը: Դրա հետև կապված ռիսկերին ընդհանրապէս անդրադարձ չկա: 60 տոննա պայթուցիկ գոյուղի միջով անցնող ճանապարհով տեղափոխելու, բնակավայրից ընդամենը 16կմ հեռավորության վրա պահեստավորելու հետ արդյո՞ք ընակիցները համաձայն են:

10. Πιαρέτερον, τηλεφονήμαν, τηρων απορριψήν τις ήρωακής αυτού σημείου περιπτώσεων.

աղմուկն ի՞նչ ազդեցություն է ունենալու շրջակա միջավայրի վրա: Ըստ այս ԾՍԳ-ի՝ բոլոր տեսակի ազդեցությունները սահմանափակվելու են բուն բաց հանքի տարածքով: Այսինքն բեռնատարներ չեն անցնելու ավտոճանապարհներով ու հանքաքար չեն տեղափոխելու: Պայթեցման աղյուկն ինչպես է հաշվարկվել և գիտականորեն ինչպես է հիմնավորվում միայն բաց հանքի տարածքում իր ազդեցությունը:

11. Աօրնողութելի է, որ հանքային տեխնիկայի, ավտոտրանապորտային միջոցների դիգելային վառելիքի արգասիքները, լցակույտերի եւ պահեստների մակերեսից ու քսուկային տնտեսությունից արտանետումները կիաշվարկվեն հիմնական շահագործման փուլում: Դրանք պետք է հաշվարկված լինեն մինչեւ փորձաքննության ենթարկվելը:

12. Անհասկանալի եւ անընդունելի է նաև հետեւյալ ձեւակերպում՝ «Դաշվի առնելով նշված հանգամանքը եւ այն, որ լեռնակապիտակ աշխատանքներն ընդհանուր հաճարողութափանանան աշխատանքների մաս են կազմում, արտանետվող նյութերի մթնոլորտում ցրման եւ գետնամերձ կոնցենտրացիաների առանձին հաշվարկ չի կատարվում»:

13. Մթնոլորտում վնասակար

Եյուրեկի ցրման հաշվարկները կատարված են բնակելի տարածքների սահմանային թույլատրելի նորմերի հաշվարկների հիմնան վրա, այսինքն՝ Ենթադրվում է, որ մթնոլորտում վճա-

սակար Ծյութերը մինչեւ մոտակա քնակելի տարածք հասնելը կցրվեն: Իսկ կենդանական եւ բուսական աշխարհի առումով հաշվարկմեր ինչ- չո՞ւ չեն արվել:

14. Ազդեցությունը ջրային ռե- ստրուսների վրա կիսաս է եւ թերի: Չկա 5 աղբյուրների ջրհավաք տա- րածքում նախատեսված հանրի շահագործման արդյունքում այդ աղբյուրների վրա ազդեցության հաշվարկը: Ստորգետնյա ջրային ռե- ստրուսների վրա ազդեցություն նույն- պես գնահատված չէ: Դաշվարկված է բացահանքի գործունեության ջրա- պահանջ, սակայն հստակ նշված չէ, թե որոնք են դրա հավանական աղբյուրները, արդյո՞ք դրանք մո- տակա քնակավայրերի եւ կենդանա- կան ու բուսական աշխարհի համար կենսական նշանակություն ունեն:

15. Անհասկանալի եւ անընդու- ելի է հետեւյալ ձեւակերպումը. «Տեխնիկական ջրի օգտագործումն ամբողջությամբ հանդիսանում է անվերադարձ ջրօգտագործում եւ արտահոսք չի առաջանալու»:

16. Ցավալի է, որ մակաբաց-
ման արդյունքում առաջացած
11596 հազ. խճ ապարները, որոնք
փաստացի թափոն են լինելու, ՀՀ
թերի օրենտարրության պատճա-
ռով թափոն չեն հանարվում, ուստի
դրանց հետ կապված ազդեցության
մեղմնան որեւէ գործողություն նա-
խատեսված չէ:

Մընոլորտային աղտոտման
տնտեսական վճար հաշվարկված է
տարեկան դրդամենոր 85 316 դրամ՝

Եթենակապիտալ աշխատանքների փուլում եւ 975 368 դրամ՝ բուն շահագործման փուլում, սակայն ֆինանսական պարուսավորությունների շահագործողը ընկերության համար նախատեսված չեն: Կավակնելի է աղտոտման տնտեսական վնասի չափը՝ նույնիսկ եթե այն հաշվարկվել է ըստ օրենսդրությանք սահմանված բանաձեւի:

17. Զարմանք է առաջացնում ջրային ռեսուրսների վրա ազդեցության հետեւյալ ձեւակերպումը՝ «Անմիջապես բացահանքի շահագործման արդյունքում աղտոտված արտահոսք չի առաջանում, անձրեւացների եւ ծննդաբի հոսքերը մեծանասամք՝ շնորհիվ շրջանցող առվակների եւ կյուպեսների, հեռացվում են տեղանքից առանց աղտոտվելու, իսկ հանքի խոռոչները լցվոն հոսքերը հիմնականում հատակի ճեղքերի եւ դատարկությունների միջոցով ներծծվում են խորքերը: Նախ, եթե հեռացվում են առանց աղտոտվելու, ո՞ւ են հեռացվում, ո՞ր առուներն ու վտակներն են լցվում: Երկրորդ, արդյո՞ւ 24հա տարածքում հնարավոր է անձրեւացների եւ ծննդաբի հոսքերի կառավարում այնպես, որ դրանք չարտահոսեն: Շրջանցող առվակների եւ կառուցվելիք կյուպեսների թվի ու տեղադրության մասին ԾՎԳ-ում

ոչինչ չկա:

18. ԾՎԱԳ-ում հողային ռեսուրս-
ներին վերաբերող տեղեկությունն-
երը հակասական են. նախ նշվում
է, որ տեղանքու լեռնամարգագետն-

Նային է, հումանակ հարուստ հողա-
ծածկությով, այնուհետև հողային
ռեսուրսների վրա ազդեցության
բաժնում նշվում, որ «երջային վի-
ճակում տեղանքը գործնականում
գույք է թերի հողաշերտից»:

յացված, ինչը բավարար չէ նույնիսկ գնահատական տպու հանար: Այս բաժինը, բնապահպանական մոնիթորինգի խոստումով հանդերձ, պարզապես դատարկ է:

Կերը Ծված կետերն արդեն բավարար են Եգրակացնելու, որ Բարձրադրիի ուկու բաց հանքի ծրագիրը կազմված է առանց լուրջ մասնագիտական եւ սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների, իսկ այդ տարածքում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածների վրա ազդեցության ուսումնասիրությունն ընդհանրապես բացակայում է: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ հետագայում գործարկվելու է նաև հարստացման ֆարմիկա, որի ազդեցության մակին ոչ մի խոսք չկա ԾԱՀ-ում, ապա միանշանակ այս ծրագրի իրագործումն անթույլատրելի է:

«Թօնկան» բառաքայիշական

«Խոչքան» քաղաքացիության
Նախաձեռնության անդամական՝
Աննա Շահնազարյան, Լեռն
Գալստյան
Երևան, 29 մայիսի 2012թ.

ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ճՈճՈՂ ԿԱՄՈՒՐՁՈՂ

Հին Խնձորեսկի հեքիաթը



Մարդու կարուրից միշտած քերծեր, պներ ու եկեղեցիներ

Սկիզբ՝ էջ 2

Հին Խնձորեսկի ավերակները հիմա գտնվում են 4-5կմ ձգվող վիրխարի ծորի աջ եւ ձախ լանջերին՝ կտրտված հազարավոր քար ու քարափների ցցվածքներով ու համատարած ժայռաշղթամերով։ Հին Խնձորեսկը հնությունների թանգարան է՝ բաց երկնքի տակ։ Չորս շինարարության համար հարճաց չեն։ Այդ պատճառով էլ բնակչները ծորն ի վեր կառուցել են դարավանդներ, տներն իրար վրա դասավորել այնպես, որ մեկի կտրտը բակ է ծառայել մյուսի համար։ Այնպես որ գյուղը ննանվել է հսկայական ամֆիթատրոնի՝ ոտքերը մեկնած միջնեւ ծորի հատակը, գլուխը հենած սարահարի ժայռը բարձունքներին։ Սա բնորոշ է եղել Սյունյաց աշխարհի համար։ Խնձորեսկը եղել է ժայռատանիքի այրերի, դարադամ-քարատակերի, դար-պնդոցների, բերդ-ամրոցների։ Քարափներից կախված բռստան բանջարանցների, գիշապոտուս վիճակների, քերծերի ծոցերը մտած կամքակապ աղբյուրների, կապ ու կապանների, սահքսահանքների, քաղից քաղ անցնող նեղիկ, օձագայաց ճամփաների, իրար մեջ մճճված ծոր ու ծորակների աշխարհին։

Այդ զարմանահրաց աշխարհում հիմա միայն ավերակներ են մնացել՝ համատարած լրճակ տնատեղեր, մրածեփ օճորներով այրեր, մուռ ու մռայլ խոռոչներ, քանդված պատեր, անտեր-անտիրական քարատակեր՝ հող ու ավազով ծածկված բռնիրությաններով, վիլաքների տակ մնացած քար քառարաներ, անհետ կորած հուշարձյուրներ ու հետքեր, հետքեր, որ հիշեցնում են, որ այս տեղ բնակատեղի է եղել, որ մարդ է ապրել։

Հին Խնձորեսկի բազում քարայրներից մեկը։



Սխիթար Սպարապետի կննորուակայանը Խնձորեսկում (Գաղալուսց բերդը):

Հին Խնձորեսկի կենդանությունը տեսել է մինչեւ 1954թ.: 54-ից սկսել է քափուրվել՝ սկզբում դանդաղ, հետո՝ շատ արագ։ Նոր գյուղը կառուցվել է հիմ գյուղի հաշվին։ Հին գյուղում ամեն ինչ քանվել է։ Մարդիկ, ինչ հնարավոր է եղել՝ քար, պակա, թիթեղ, քանդեւտարել են իրենց նոր տները կառուցելու համար։ Այն ժամանակվա իշխանությունների թողովարյան հին ու պատճական խնձորեսկը մի քանի տարու վերածվել է համարական ավերակի։

Խնձորեսկի վիրխարի ծորը կողցերի է շատ բան, բայց որպես զարմանահրաց վայր ու բնակատեղի, իր հմայքը չի կողցը։ Այն հայուր հազարավոր գրուշիկների է ընդունել իր գիրկը, եւ տարեցտարի դրանց թիվը գնալով ավելանում է։ Զանգեզուրի չքնար բնությունն, նոս աշխնքնող տեսարանները, ծեռակերտ ու անծոռակերտ պատկերաքանարակները մագնիսի պես դեպի իրենց են ձգում բազմահազար գրուշիկների։ Հին Խնձորեսկն էլ իր տեսարժանությամբ գրադեցնում է ռաջացին տեղերից մեկը եւ հավակնում է դառնալ Սյունյաց աշխարհի գրուշիկության կենտրոններից մեկը։

Իր նեղիկ քավիդներում ապելու ու գյուտելու է Խնձորեսկը՝ իր պատճությունը հարստացնելով առանձին բարերար նվիրյալների հայրենանվեր գործերով։

Մոտ 150 տարի առաջ Փանունց Լալազարը (Յովակիմ Լալազարյան) խնձորեսկից հարավ՝ Որոտան գետի վրա կամուրջ է կառուցել, որ գյուղը ճանապարհ ունենալ դեպի Պարսկական։

Խնձորեսկի ժայռազամգված թթությունների ու ծորալանջերի վրա հայտնի ու անհայտ վարպետներ հարյուրավոր կամարակապ աղբյուրներ են շինել, որ անցնողաքանողները ջուր խմեն ու օրինեն կառուցող վարպետների ծնունդը։ 1665թ. կառուցված Սր Հոդվածին



Սխիթար Սպարապետի գերեզմանը Սր Հոդվածին եկեղեցու բակում։



Մանվեյանների տունը (միակ տունը, որ ամբողջովին չի քանդվել):


Եսեղեցու մուտքի հորիզոնական քարի վրա կա այսպիսի հիշատակություն։ «Ես Գիշու որդի մութքակս շինել տվի զայս եկեղեցիս ին հալալ արդյունանց, հիշեցեք զիս»։

«Ղանդունց նով» կոչվող աղբյուրի սրբատաշ կամարի մեջտեղում գրված է. «Հիշատակ է աղբյուրս Մալունց տեղ Բաղդասարի որդի ուստա Օհանմի»։ Կա նաև հիշատակություն այն մասին, որ աղբյուրը երկու անգամ վերանորոգվել է, մեկ՝ 1819թ. ուստա Օհանի թռան կողմից, մեկ էլ 1961թ. հայտնի բժիշկ Աշոտ Գյուլ-

խայամի կողմից։ Հին Խնձորեսկում այսպիսի աղբյուրների թիվը մի քանի տասնյակի է համար։ Մարդիկ կառուցել են, հանուրի համար իրենց միջոցներն ու հնարավորությունները չեն հնայել, որ իրենց գործերով անմռաց մնան, որ իրենց լուսահոգի անցավորների շիրիմներին սերունդները մոն կաշեն։

Եվ հազար անգամ փառ Աստծո, որ փառապանն անխների նվիրական ավանդույթներն այսօր շարունակվում են։

ԱՐԿԱՆԻ ԾԱՏՈՒԹՅԱՆ



Լուսավոր Կ. Հ. Հովհաննեսյանի

ԺՈՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.
«Ծրագրեր շափ
կան, սակայն մենակ
իրագործելը դժվար
կլինի»

Հարցազրույց Հին Խնձորեսկի ճոճվող
կամրջի հեղինակ եւ կառուցող ժորա
Ալեքսանյանի հետ

Սկիզբն՝ էջ 1

Կամրջի կառուցման համար
ծախսվել է մոտ 15 մլն դրամ:

Ամփո Ինազամանցի:
- Նախագիծն ինը եմ արել։
Ծնորհակալություն եմ հայտ-
նում և Խնձորեսկի գյուղապետ
Սերյոժա Դայրապետյանին,
գյուղի երիտասարդներին եւ էլի-
շատերին, քանի որ կառուցման
ժամանակ մշտապես զգացել
եմ նրանց օգնությունը։ Ման-
վանդ շիճանյութի տեղափոխ-
ման հարցում՝ հինգամակը ցո-

ԱՅԵՒԹԵՎՈՐԸ ■ ԺՈՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. Ծնվել է 1950թ. Խնձորեսկում, 1965-ին տեղափոխվել է Գորիս: 1969-70 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, զորացրվելուց հետո մինչեւ 1974թ. աշխատել է Վարորդ: Ապա ընդունվել եւ ավարտել է ՀԱ.Արքովյանի անվան Շենանի պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասմաճյուղի ֆիզիկայի ֆակուլտետը: 1979-ից մինչեւ 1986-ն աշխատել է Գորիսի ծխախոտի ֆերմենտացիոն գործարանում, սկզբում՝ արտադրամասի վարիչ, ապա՝ արտադրության պետ, այնուհետև տեղափոխվել է Բարձրավագի կոլտնտեսություն, որտեղ որպես վարչության նախագահ աշխատել է մինչեւ 1991թ.: 1991-ին կրկին տեղափոխվել է Գորիս՝ մինչեւ 1998թ. գլխավորել հացի կոմբինատուր, որից հետո, առ այսօր, գրադարձում է ծեղնարկատիրական գործունեությամբ՝ հիմնադրելով եւ գլխավորելով մի շարք ծեղնարկություններ. «Գորիսիաց», «Խնձորեսկիաց», Գորիսի ալրադաց եւ այլն: Այսօր գլխավորում է իր հիմնադրած «Մինա» հյուրանոցը:

լինի ոչինչ ամել՝ առանց նրանց օգնության։ Եթև կարող չիշխատել հատկապես եռակցող Սեյրան Ավետիսյանի ամուսնու, ում ջանադիր եւ պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ հճարավոր եղավ կարծ ժամանակում կամքջի շինարարությունն ավարտին հասածել։

նում եւս նմանատիպ ձեռնարկումների հերիխնակ եք եղել, պատմեցեք նաև այդ մասին։

— Այս, դրվ իրավակի եք, սա առաջին նախաձեռնությունը չէ։ Ինձ համար միշտ առաջնահերթ է եղել ժողովրդի հոգեւորք թերթեացնելը, մարդկանց օգտերը՝ աշխատանք, ասորուստի-

— Իսկ գործական ի՞նչ
խնդիր է լուծելու այս կամուքը:

— Փորձել ենք մոտեցնել
պատմական Խնձօրենսվը Եթր-
կայիս Խնձօրենսկին: Կամուրջը
կիրաճի, որ շատերը հանդես
գան այլ նախաձեռնություննե-
րով, ասենք, օրինակ, ստեղծել
հանգստի գոտիներ, անհրա-
ժեշտ ծառայություններ եւ այդ
միջոցով գումար վաստակել: Կամուրջը հնարավորություն
կտա մոտիկից հաղորդվել Յշն
Խնձօրենսկին՝ Միթրար Սպա-
ռապետի գերեզմանին, գյուղի
եկեղեցիներին, քարանձավ-
երին, պատմամշակութային
մյուս հուշարձաններին, ինչը,
ի վերջո, ներդրում կլինի մեր
ազգային արժեքների պահ-
պանան, աճող սերնդի հայրե-
նասիրական դաստիարակու-
թյան գործերում:

— Պարոն Ալեքսանյան, իսկ
ի՞նչ կասեր անվտանգության
համակարգի մասին:

— Այս պահին պաշտոնական փորձաքննություն է անց-

Հարցագրույցը՝ ԱՂԱՎԻ ՆԱՎԱՍՐԴՅԱՆԻ



Հասցե՝ պ.Գորիս, Մաշտոցի 169
Հեռախոս՝ (093) 11 77 55
 (099) 03 01 19
 (0284) 3 01 19
Էլ. հասցե՝ hotelminagoris@gmail.com